


CAST համակարգը, կառավարվում է մետատվյալների օգնությամբ, որոնք թարմացվում են հատուկ կենտրոնական կառավարման խմբագրիչ համակարգից՝ դատական համակարգի ադմինիստրատորների կողմից: Դատական գործողությունները, դրանց բնութագրիչ դաշտերը, դատական գործընթացի կողմերը և դրանց բնութագրիչ դաշտերը, դատական գործընթացների սխեմաները, գործընթացի կողմերի իրավասությունները, դատական այլ օբյեկտները, նրանց բնութագրիչ դաշտերը կառուցվում և փոփոխվում են հատուկ խմբագրիչի օգնությամբ: Կենտրոնական համակարգում նկարագրված սխեմաները, գործընթացները և կանոնները սահմանում են նստավայրերում աշխատող լրկալ համակարգերի ֆունկցիոնալությունը: Կենտրոնական խմբագրիչում կատարված կանոնների և գործընթացների փոփոխությունները 30 րոպեի ընթացքում հասնում են նստավայրերի լրկալ համակարգեր:

CAST-ն այսօր դատական գործառույթների ավտոմատացման առօրյա օգտագործման համակարգն է, որում այս պահին նկարագրված է ավելի քան 1700 դատավարական գործողություն, մուտքագրված է դատական գործերին վերաբերվող ավելի քան 70 մլն. տվյալ:



CAST-ը դատարանների լոկալ համակարգերում ապահովում է հետևյալ գործառույթները՝

Գործերի կառավարման բաժին

- Դատական պրոցեսի յուրաքանչյուր գործառույթը ֆիքսելու և դրան համապատասխան տվյալները մուտքագրելու հնարավորություն:
- Յուրաքանչյուր գործին տրվում է կոդավորված չկրկնվող համար:
- Համակարգում ընթացիկ և ավարտված դատական գործերի մասին տեղեկատվություն:
- Գործում առկա տվյալների որոնման և քանակական տվյալների ստացման հնարավորություն:
- Տեղեկատվություն գործի դատական ընթացքի և վճռի մասին:
- Տեղեկատվության օպերատիվ ստացման հնարավորություն:
- Դատական գործերի ավտոմատ մակագրման համակարգ:
- Դատական գործերի իրավասությունների ենթահամակարգ:

Անձնակազմի կառավորման բաժին

- Համակարգի բոլոր աշխատակիցների ամբողջական տվյալների առկայության ապահովում:
- Համակարգում թափուր պաշտոնների վերաբերյալ տեղեկատվություն:
- Ընդլայնված որոնում՝ ըստ ցանկացած անձնական տվյալի:
- Անձնական էլեկտրոնային գործի և հաշվետվությունների գեներացում:

Ընդհանուր բաժին

- Փաստաթղթաշրջանառության և գործավարության ավտոմատացում
 - Գրությունների համարակալման հատուկ կոդային կարգի սահմանման հնարավորություն յուրքանչյուր ենթակառուցվածքի համար:
 - Պլանավորված գործողությունների, հանձնարարականների և հրահանգների կատարման ժամկետների հիշեցման և վերահսկման համակարգ:
 - Գրությունների և հանձնարարությունների ենթամակագրման հնարավորություն:
 - Մուտքագրված ցանկացած վավերապայմանով գրությունները փնտրելու հնարավորություն:
 - Փաստաթղթերի էլեկտրոնային պատճենները կցելու հնարավորություն:
 - Մուտքային, ելքային գրությունների դիմումների, բողոքների մատյանների վարում:
- Ներքին գաղտնագրված էլեկտրոնային փոստ:
- Ներքին տեղեկատվական բլոկ:

Ֆինանսական բաժին

- Ծախսերի մուտքագրում:
- Ծախսերի, գերածախսի և խնայողության դիտման ու համեմատման հնարավորություն՝ նախատեսված բյուջեի տողերին համապատասխան:
- Ֆինանսական հաշվետվություններ:

Մոնիտորինգ և վիճակագրություն

- Դատական գործերի վիճակագրություն:
- Դատական գործերի մոնիտորինգ:
- Սնանկության կառավարիչների մոնիտորինգ/շտեմարան:

- Դատապարտյալների ինֆորմացիոն մոնիտորինգ/շտեմարան:
- Էլեկտրոնային մակագրման վիճակագրություն:
- Ընդհանուր համակարգի վիճակագրություն/հաշվետվություն՝
- Ինֆորմացիայի տեղաշարժի մասին տեղեկատվություն:
- Օգտագործողների գործողությունների վիճակագրություն, հաշվետվություններ:
- Համակարգում սխալների մոնիտորինգ:

Աղմինիստրատիվ կառավարման մոդուլ

- Համակարգային տեխնիկական կառավարման գործիքներ:
- Անձնակազմի կառավարում:
- Ֆինանսական կառավարում:
- Ընդհանուր կառավարման գործիքներ:

Լոկալ դատարաններում CAST համակարգում գործում է դատավորի մակագրության ենթահամակարգը, որը մեկ լուծման մեջ սահմանված մաթեմատիկական մոդելը համակցում է պատահական բախշման սկզբունքի հետ: Դատավորի մակագրության վերուժական ենթահամակարգը թույլ է տալիս ըստ մաթեմատիկական կանոնների, գործոնների գործակիցների հաշվարկման, հավանականային մոդելների կառուցման և դրանց կիրառման միջոցով դատական գործը մակագրել համապատասխան դատավորին: Մակագրության վրա ազդեցություն թողնող գործոնների օրինակներ են՝

- դատական գործերի հավասար բախշմումը:
- Նմանատիպ գործերի առկայությունը (միևնույն կողմերով և նմանատիպ գործեր):
- Դատավորի մասնագիտացումը:
- Ծանրաբեռնվածության նվազեցման հատուկ գործակիցը:
- Արձակուրդը, գործուղումը, բացակայությունը, թոշակի անցնելը:
- Դատական գործի ենթատիպից կախված հատուկ գործառույթներ:
- Դատական գործից մաս անջատվելը:
- Առկայության դեպքում նստավայրի համապատասխանությունը:

- Համապատասխան մասնագիտացման դատավորի բացակայության դեպքում փոխարինումը:
- Դատավորների կոլեգիալ և խառը կազմերը՝ կախված դատարանի տիպից և գործի բնույթից:
- Ինքնաբացարկը, բեկանում և այլ դատավարական գործողություններ:
- Աշխատանքային, տոնական, հիշատակի օրերը:

Այլ համակարգերի հետ ինտեգրման և տվյալների վերլուծական բլոկ

CAST համակարգը ինտեգրված է մի շարք այլ համակարգերի և սարքավորումների հետ: Բոլոր դատարաններում առկա են տեղեկատվական մոնիտորներ և կիոսկներ, որոնց մեծ մասն այս պահին թարմացման կարիք ունեն: Մոնիտորները և կիոսկները հնարավորություն են տալիս իրական ռեժիմում ստանալ տեղեկություններ բոլոր դատարաններում քննվող գործերի մասին և տրամադրում են մի շարք այլ ծառայություններ:

CAST վերլուծական կենտրոնի համար կառուցվել է հաշվետվությունների գեներացման համակարգ, որը ըստ մետա նկարագրերի գեներացնում է վիճակագրական ագրեգացված հաշվետվություններ աղյուսակների տեսքով: Այս ենթահամակարգը մուտքին տրամադրված ժամանակահատվածի համար ստանում է գործերի քանակ, որը բավարարում է մի շարք պայմանների ինչպես բովանդակային, այնպես էլ ըստ տևողության: Այս ենթահամակարգը, որպես բազային տվյալներ, նաև հիմք է ընդունում CAST Data Mining-ի ելքային արդյունքները: Այս ենթահամակարգը ամեն մի վիճակագրական ագրեգացված թվի համար պահում է նաև դրա հիմք հանդիսացող բազմությունները (գործերի կամ անձանց ցուցակներ), որոնք օգտագործվում են դրանց բովանդակային դիտարկումների և սխալների բացահայտման համար:

DataLex հանրային տեղեկատվական պորտալը ապահովում է քաղաքացիների կապը և ներգրավվածությունը դատական գործընթացներին: Այս համակարգը հնարավորություն է տալիս հանրության համար բաց դատական գործերում կատարել որոնումներ ըստ տարբեր բնութագրիչների և գործին վերաբերվող տվյալների:


Datalex պորտալը բաղկացած է հետևյալ բաժիններից՝

- Դատական գործերի որոնում՝
 - Քաղաքացիական
 - Քրեական
 - Վարչական

- Վճարման կարգադրություններ
- Սնանկության
- Նիստերի ժամանակացույց՝
 - Քաղաքացիական
 - Քրեական
 - Վարչական
 - Սնանկության
- Վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների շտեմարան՝
 - Քաղաքացիական
 - Քրեական
 - Վարչական
 - Քաղ. գործերով միջանկյալ
 - Վարչ. գործերով միջանկյալ
- ՀՀ օրենքների որոնում Հայաստանի Հանրապետության իրավական տեղեկատվության համակարգում՝
- Մարդու իրավունքների եվրոպական դատարանի գործերի որոնում HUDOC համակարգում՝
- Խելացի որոնում
 - Քրեական
- Ինֆոգրաֆիկա
 - Քրեական
- Էլեկտրոնային հայցադիմումներ
- Նմանատիպ գործերի որոնում
- Հետադարձ կապ
- Առցանց վճարումներ
- Հետևեք Ձեր դիմումի ընթացքին
- Հարց ու պատասխան բաժին

Datalex.am պորտալում գործերի դիտումների քանակը հասնում է ամսական մոտ 100,000-ի: Համակարգում առկա գործերի քանակը մոտ 2 միլիոն է, տվյալների ծավալը՝ մոտավորապես 150 GB:

Datalex-ում կառուցվել է նաև խելացի տեքստային որոնողական ենթահամակարգ, որը թույլ է տալիս կատարել որոնումներ ոչ թե պարզ բառային համընկնումով, այլև որոնումներ տեքստերում՝ իմաստային վերլուծությունների արդյունքների հիման վրա: Համակարգը ճանաչում է նաև օրենսգրքի վրա հղումները ըստ հոդվածի, մասի, կետի:



DataLex համակարգը դատական գործերի վերաբերյալ տվյալները և թարմացումները ստանում է CAST համակարգից հատուկ XML պրոտոկոլով, այնուհետև կատարվում է տվյալների լրամշակում (data minig) փնտրման համար հարմարեցված տվյալների կառուցվածք ստանալու համար: Համակարգը կառուցված է մեծ տվյալների պահմապանման և մշակման սկզբունքով:

2. <<ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՓՈԽԻՆՏԵԳՐՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ԳՈՐԾԻՔԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՈՒՄ>> ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

2.1 Ծրագրի նկարագրությունը

2.1.1. Նպատակը

<<Էլեկտրոնային արդարադատության փոխինտեգրված համակարգերի գործիքակազմի զարգացում>> ծրագրի (այսուհետ՝ Ծրագիր) մրցույթն իրականացվում է << Արդարադատության

նախարարության և ԱՄՆ ՄՁԳ միջև կնքված Աջակցության և Համագործակցության Հուշագրով՝ «Դատական գործերի փաստաթղթերի թվայնացում և էլեկտրոնային դատարանների համակարգի զարգացում Հայաստանի Հանրապետությունում» դրամաշնորհային ծրագրի ֆինանսավորման շրջանակներում:

Ծրագրի **հիմնական նպատակն է ստեղծել էլեկտրոնային դատարանների համապարփակ համակարգ (E-COURT FILING SYSTEM)**, որն ապահովելու է ֆիզիկական և իրավաբանական անձանց, փաստաբանների, դատավորների և դատական ծառայողների՝ էլեկտրոնային հարթակում հարաբերությունները, այդ թվում՝

- դատարանից օգտվողների կողմից էլեկտրոնային եղանակով դատարան դիմելը և էլեկտրոնային դատական գործ ստեղծելը,
- առցանց եղանակով դատական գործի նյութերին ծանոթանալը, դրանից պատճեններ ստանալը, ապացույցներ ներկայացնելը, միջնորդություններ և այլ դատավարական գործողություններ էլեկտրոնային եղանակով կատարելը,
- ստեղծված և մուտքագրված փաստաթղթերի գրանցումը և պահպանումը,
- էլեկտրոնային փաստաթղթաշրջանառությունը՝ գործերի արագ շրջանառությունը մեկ ատյանի դատարանից մեկ այլ ատյան, ինչպես նաև միևնույն ատյանի դատարանի նստավայրերի միջև:
- Դատավորի կամ համապատասխան դատական ծառայողի կողմից որոշումները կամ դրանց նախագծերը էլեկտրոնային եղանակով կազմելը, ստարագրելը և կողմերին ուղարկելը:
- Դատական, այդ թվում՝ միջանկյալ ակտերի էլեկտրոնային եղանակով բողոքարկելու հնարավորությունը և համապատասխան գործերը վերաքննիչ կամ վճռաբեկ դատարաններ ուղարկելը:

2.1.2. Ակնկալվող հիմնական արդյունքները.

- 1) Datalex պորտալի E-court filing ենթահամակարգի զարգացում, ինչի արդյունքում դատարանից օգտվողների, այդ թվում՝ քաղաքացիների, իրավաբանական անձանց և փաստաբանների էլեկտրոնային գրասենյակներում կավելացվեն դատավարական օրենսդրությունից բխող անհրաժեշտ գործառույթները, կիրականացվի կողմերի անհատականացում (իդենտիֆիկացիա)՝ հնարավորություն տալով դատարանից օգտվողներին իրենց վերաբերյալ կամ մասնակցությամբ դատական գործընթացների մասին տեղեկանալու, դրանց մասնակցելու, էլեկտրոնային փաստաթղթերով աշխատելու համար:

- 2) CAST համակարգի ֆունկցիոնալության զարգացում և համապատասխանեցում E-court filing համակարգի պահանջներին, լրացուցիչ ծրագրային բաղադրիչների մշակում, ինչը կապահովի դատարաններում գործերի կառավարման ավելի արագ և դյուրին ընթացքին և կդարձնի համակարգը օգտագործողների համար ավելի մատչելի և արագագործ:

2.1.3. Բաղադրիչները.

Ծրագրի հիմնական նպատակի իրականացման համար անհրաժեշտ է արդիականացնել գործող Datalex.am և CAST էլեկտրոնային արդարադատության փոխինտեգրված համակարգերը և դրանց գործիքակազմերը՝ Ծրագրի հետևյալ պարտադիր բաղադրիչների միջոցով.

- 1) Մշակել և ներդնել դատարանից օգտվողների, այդ թվում՝ ֆիզիկական, իրավաբանական անձանց և փաստաբանների խիստ անհատականացման (իդենտիֆիկացում) և գրանցման համակարգ:
- 2) Ընդլայնել և զարգացնել դատարանից օգտվողների, այդ թվում՝ ֆիզիկական, իրավաբանական անձանց և փաստաբանների էլեկտրոնային գրասենյակի ֆունկցիոնալությունը, ավելացնել ՀՀ դատավարական օրենսդրությունից բխող անհրաժեշտ գործառույթները՝ հնարավորություն տալով դատարանից օգտվողներին իրենց վերաբերյալ կամ մասնակցությամբ դատական գործընթացների մասին տեղեկանալու, դրանց մասնակցելու, էլեկտրոնային փաստաթղթերով աշխատելու համար:
- 3) Զարգացնել CAST համակարգի ֆունկցիոնալությունը E-court filing համակարգով և այլ մոդուլներով նախատեսված ֆունկցիոնալ զարգացումների ապահովման համար:
- 4) Մշակել և ներդնել էլեկտրոնային փաստաթղթերի գրանցման, անհատականացման (իդենտիֆիկացում) և պահպանման համակարգ:
- 5) Մշակել և ներդնել դատական էլեկտրոնային ծանուցումների համակարգ:
- 6) Մշակել և ներդնել դատական ակտերի ստեղծման խելացի ենթահամակարգ:
- 7) Մշակել և ներդնել դատական նիստերի և դահլիճների ընտրության համակարգ:
- 8) Մշակել API (Application Programming Interface)-ներ՝ արտաքին համակարգերի հետ աշխատելու համար:

1. Մշակել և ներդնել ֆիզիկական, իրավաբանական անձանց և փաստաբանների խիստ անհատականացման (իդենտիֆիկացում) և գրանցման համակարգ:

Մրցույթում հաղթող ճանաչված կազմակերպությունը (**այսուհետ՝ Կատարող**) պետք է մշակի Datalex համակարգից, ըստ ՀՀ դատավարական օրենսդրությանը համապատասխան հնարավոր օգտվողների (ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, փաստաբան, վկա և այլք) խիստ անհատականացման և գրանցման համակարգ: Մշակված էլեկտրոնային դատարանի համակարգում պետք է ապահովել դատարանից հնարավոր օգտվողների կողմից Datalex համակարգում անձնական էլեկտրոնային գրասենյակի ստեղծման հնարավորություն: Datalex համակարգից օգտագտվողները ստեղծում են իրենց անձնական էլեկտրոնային գրասենյակները՝ անցնելով անհատականացման գործընթաց: Անձնական էլեկտրոնային գրասենյակը ստեղծելիս համակարգը պետք է հնարավորություն տա ընտրելու օգտվողի դերը՝ ֆիզիկական անձ, իրավաբանական անձ, փաստաբան, վկա կամ այլ, ինչպես նաև անհատականացման այլ բաղադրիչներ՝ համաձայնեցնելով ՀՀ Արդարադատության նախարարության **<<Դատաիրավական ԾԻԳ>> պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու)** հետ: ՀՀ ռեզիդենտների համար անհատականացման գործընթացը պետք է ապահովվի անձի նույնականացման քարտի միջոցով կամ այլ եղանակով՝ Պատվիրատուի հետ համաձայնեցնելով: ՀՀ ոչ ռեզիդենտների համար համակարգից օգտվողի անհատականացումը պետք է ապահովվի ՀՀ օրենսդրությանը սահմանված անհատականացման համապատասխան ձևով՝ Պատվիրատուի հետ համաձայնեցնելով:

Համակարգը պետք է հնարավորություն տա օգտվողի անհատականացման վերաբերյալ ստացված ունիկալ տվյալները համեմատել տվյալների մի քանի կետնրոնների հետ (ոստիկանության անձնագրերի և վիզաների վարչության ռեգիստր, իրավաբանական անձանց պետական ռեգիստր և այլն): Անհատականացման արդյունքում օգտվողը պետք է ստանա մեկ կամ մի քանի դեր համակարգում, ինչը ենթադրում է համապատասխան իրավասություններ էլեկտրոնային գրասենյակում: Խիստ անհատականացման համակարգը պետք է թույլ տա օգտվողների էլեկտրոնային գրասենյակում հասանելի դարձնել այն գործերը, որոնցում օգտվողը հանդես է գալիս որոշակի դերով (հայցվոր, պատասխանող, վկա, փաստաբան և այլն): Մշակված համակարգում օգտվողի անձնական էլեկտրոնային գրասենյակի մանրամասն այլ նկարագրերը պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

2. Ընդլայնել և զարգացնել դատարանից օգտվողների՝ ֆիզիկական, իրավաբանական անձանց և փաստաբանների էլեկտրոնային գրասենյակի ֆունկցիոնալությունը:

Կատարողը պետք է ապահովի, որ մշակված համակարգը համապատասխան էլեկտրոնային գործիքների միջոցով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված դատավարական գործողությունների և իրավասությունների շրջանակներում ապահովի էլեկտրոնային դատարանի և հնարավոր օգտվողների միջև փոխադարձ կապը:

Համակարգը պետք է հնարավորություն տա, որ օգտվողը մուտք գործելով էլեկտրոնային գրասենյակ՝ Datalex.am համակարգից ավտորիզացվի, ստանա համապատասխան դերը և նրան հասանելի դառնան տվյալ դերով նախատեսված ՀՀ դատավարական օրենսդրությամբ սահմանված իրավասությունները e-court filing համակարգում: Օգտվողը պետք է կարողանա

նախապես մշակված գործողությունների և իրավասությունների սխեմայով մասնակցել դատական գործին՝ առցանց ձևայնացված գործողություններով՝ ստեղծել փաստաթղթեր, ստորագրել դրանք, ներկայացնել դատարան յուրաքանչյուր փաստաթուղթի համար նախատեսված հատուկ դաշտում կցելու միջոցով: Օգտվողը պետք է ունենա հնարավորություն էլեկտրոնային վճարման միջոցով վճարել դատական գործընթացի հետ կապված պետական տուրքեր և վճարներ: Էլեկտրոնային վճարման համակարգը պետք է ունենա օգտվողի ածնական և բանկային տվյալների գաղտնիության պահպանման ապահովվածություն:

E-court filing համակարգում օգտվողի համապատասխան դերի և նրան հասանելի գործողությունների և իրավասությունների, ինչպես նաև համակարգով էլեկտրոնային վճարումների իրականացման սխեմաների մանրամասն նկարագրերը և ֆունկցիոնալ հնարավորությունները պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները:

Համակարգը պետք է ապահովի, որ CAST-ում դատական գործի մասնակիցների անհատականացման ֆունկցիոնալությունը ավելացնելուց հետո համակարգ մուտք գործած օգտվողը ՀՀ օրենսդրությամբ սահմանված իր դերին համապատասխան իրավասությունների շրջանակում տեսնի այն բոլոր դատական գործերի տվյալները, էլեկտրոնային փաստաթղթերը, (որոնք տեղաբաշխված սկզբունքով վարվում են տարբեր տվյալների կենտրոններում), որտեղ նա ունի որևէ դերակատարում:

Համակարգը պետք է հնարավորություն տա, որ օգտվողը՝ ընտրելով դատական գործը, որտեղ նա ունի որևէ դերակատարում, իրեն վերապահված գործողությունների սխեմայի և իրավասությունների շրջանակներում, կարողանա տեղեկատվություն ստանալ դատական գործերի վերաբերյալ և իրականացնել դատավարական գործողություններ:

Դատարանից օգտվողը իր էլեկտրոնային գրասենյակից պետք է ունենա փաստաթղթերի հետ աշխատելու համար նախատեսված գործիքային միջոցներ՝ փաստաթղթերի ֆայլերը վերբեռնելու, էլեկտրոնային ստորագրելու, պահուստում պահելու և դատական գործողությունների կատարման միջոցով դատարան ուղղարկելու և ստանալու, ինչպես նաև այլ հնարավորություններ, որոնց մանրամասն նկարագրերը և ֆունկցիոնալ հնարավորությունները պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները:

Օգտագվողը պետք է հնարավորություն ունենա ծանոթանալ նաև այն դատական գործերի դատական նիստերի ժամանակացույցին, որոնցում նա ունի դերակատարություն, որոշ դերերի պարագայում (օրինակ փաստաբան) օգտվողը կկարողանա նաև առցանց մասնակցել դատական նիստի օրն ընտրելու գործընթացին:

Համապատասխան զարգացումները արդեն գոյություն ունեցող ենթահամակարգի վրա պետք է իրականացնել հաշվի առնելով ամբողջ համակարգի տեղաբաշխված բնույթը: Օգտագվողը տվյալները դիտում է և գործողություններ է կատարում Datalex.am-ի տվյալների կենտրոնում, գործերի վարումը իրականացվում է համապատասխան դատարանի լոկալ CAST-ի տվյալների կենտրոնում, իսկ գործողությունների սխեմայի և իրավասությունների վերաբերյալ մետա տվյալները կառավարվում են CAST-ի կենտրոնական տվյալների կենտրոնում: Տվյալների

տեղաբաշխված կենտրոնների փոխգործելիությունը ապահովվում է հատուկ մշակված պրոտոկոլի միջոցով:

3. Չարգացնել CAST համակարգի ֆունկցիոնալությունը՝ E-court filing համակարգով և այլ մոդուլներով նախատեսված ֆունկցիոնալ զարգացումների ապահովման համար:

E-court filing համակարգը պետք է ստեղծվի CAST-ում նկարագրված դատական գործերի գործողությունների և գործողությունների սխեմայի հենքի վրա, որոնցով դատական համակարգի աշխատակիցները մասնակցելու են դատական գործերի էլեկտրոնային կառավարման համակարգին և քաղաքացիների հետ էլեկտրոնային հարաբերություններին: Կատարողը պետք է զարգացնի CAST համակարգի ֆունկցիոնալությունը՝ ապահովելով e-court filing համակարգի օպտիմալ գործածումը:

3.1 Դատական գործերի գործողությունների և սխեմաների խմբագրիչի զարգացումներ CAST համակարգում:

Կատարողը, Պատվիրատուի հետ համաձայնեցնելով, պետք է արդիականացնի դատական գործերի գործողությունների և սխեմաների խմբագրիչը, որը թույլ է տալիս նկարագրել դատական գործողությունների սխեմաները, գործողությունների հաջորդականությունը, կատարման իրավասությունները, ինչպես նաև սահմանել գործողությունների բնութագրիչները և կատարման տրամաբանությունը:

Դատական գործերի գործողությունների և սխեմաների խմբագրիչում հարկավոր է ավելացնել արտաքին օգտվողի գաղափարը (Datalex.am-ից գրանցված օգտվող), արտաքին օգտվողների տեսակները և դինամիկ (ավտոմատացված) կերպով կարգավորել արտաքին օգտվողների իրավասությունների շրջանակը՝ ըստ բոլոր օգտվողների տեսակների, գործերի տիպերի (քաղաքացիական, վարչական, սննանկության, վճարման կարգադրության և այլն), դատարանների ատյանների, գործերի այլ պարամետրերի: Դատական գործերի գործողությունների և սխեմաների արդիականացված խմբագրիչի մանրամասն նկարագրերը և ֆունկցիոնալ հնարավորությունները պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները:

3.2 CAST համակարգում փաստաբանների ռեգիստրի ստեղծում

Փաստաբանների խիստ անհատականացման համար անհրաժեշտ է ունենալ ՀՀ-ում գործող լիցենզավորված փաստաբանների ռեգիստր, ըստ որի կատարվելու է փաստաբանների անհատականացումը և Datalex.am կայքից հասանելի E-court filing համակարգի էլեկտրոնային գրասենյակում փաստաբանի իրավասությունների տրամադրումը: Փաստաբանների գրանցման գործընթացը պետք է նկարագրվի գործողությունների խմբագրիչի միջոցով, որը թույլ կտա գրանցման գործընթացում իրականացնել փոփոխություններ առանց ծրագրավորողների միջամտության:

Փաստաբանների ռեգիստրը պետք է պարունակի փաստաբանների անձնական և անհատականացման տվյալները, աշխատանքային լիցենզիայի մասին տվյալները (համար, տրման ամսաթիվ, ակտիվ է մինչև, և այլն): Գրանցման մասին տվյալները պետք է հնարավոր լինի սահմանել և փոփոխել դինամիկ ձևով, հատուկ խմբագրիչի միջոցով՝ առանց ծրագրավորողի միջամտության:

Փաստաբանների ռեգիստր փաստաբանների մասին տվյալների սկզբնական մուտքագրումը պետք է կատարվի հետևյալ երկու տարբերակներով՝

- Հատուկ ֆորմատի ֆայլի միջոցով (օրինակ XML ձևայնացված ֆայլ, որը պարունակում է մեկ կամ մի քանի փաստաբանների մասին ինֆորմացիա), պարբերաբար ֆայլը թարմացվելու է Փաստաբանների պալատի կողմից:
- Ծրագրային API (Application Programming Interface) – ի միջոցով, որը ավտոմատ կերպով ստանալու և թարմացնելու է փաստաբանների մասին տվյալները CAST-ում Փաստաբանների պալատի համակարգից:

Արդեն մուտքագրված տվյալներում փոփոխությունը և նոր գրանցումների ավելացումը պետք է իրականացվի Փաստաբանների պալատի աշխատակիցների կողմից համապատասխան վեր ինտերֆեյսների և նախօրոք նկարագրված ճկուն գործողությունների սխեմաների միջոցով: Համակարգը հնարավոր օգտվողներին պետք է թույլ տա իրականացնել ռեգիստրում որոնումներ՝ ըստ գրանցման տվյալների: E-court filing համակարգում փաստաբանների ռեգիստրի ինտերֆեյսի արտաքին մանրամասն նկարագրերը և ֆունկցիոնալ հնարավորությունները պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ՝ հաշվի առնելով ՀՀ օրենսդրության պահանջները:

3.3 CAST համակարգում գործի մասնակիցների խիստ իդենտիֆիկացում

CAST համակարգում դատական գործի վարման ընթացքում, դատական գործընթացի մասնակիցների տվյալներում պետք է ավելացնել իդենտիֆիկացիոն տվյալներ (անձնագրի տվյալներ, նույնականացման քարտի տվյալներ և այլն): Իդենտիֆիկացիոն տվյալների ներբեռնումը պետք է ավտոմատացնել՝ CAST համակարգը ինտեգրելով անհրաժեշտ տվյալներ պարունակող այլ համակարգերի հետ: Դատական գործի մասնակիցներին պետք է խիստ իդենտիֆիկացնել այս տվյալների հիման վրա, որպեսզի Datalex.am-ից էլեկտրոնային գրասենյակում գրանցվելուց և ավտորիզացվելուց հետո, քաղաքացուն իր էլեկտրոնային գրասենյակում հասանելի դառնան այն դատական գործերը, որոնցում նա մասնակցում է ինչ-որ դերով:

Անձի կամ կազմակերպության անհատականացված ինֆորմացիան պետք է ինտեգրվի CAST համակարգի այլ մոդուլների հետ՝ օրինակ դատական գործերի մակագրման համակարգի, անձնակազմի կառավարման համակարգի, դատական գործերի որոնման, վերլուծական համակարգի և այլն: Դատական գործընթացի մասնակիցների իդենտիֆիկացման ենթակա տվյալների տեսակները պետք է համաձայնեցնել Պատվիրատուի հետ:

4. Մշակել էլեկտրոնային փաստաթղթերի և ֆայլերի գրանցման, իդենտիֆիկացման և պահպանման համակարգ

Կատարողը պետք է ստեղծի ծրագրային համակարգ, որով CAST և Datalex.am-ի էլեկտրոնային գրասենյակներից, համապատասխան գործողությունների արդյունքում վերբեռնված և էլեկտրոնային ստորագրված փաստաթղթերը պետք է գրանցվեն, ստանան ունիկալ իդենտիֆիկացման կոդ, պահպանվեն մեծ տվյալների համար նախատեսված ֆայլային շտեմարանում: Փաստաթղթի ֆայլից բացի մեծ տվյալների շտեմարանում պետք է պահպանվեն նաև տվյալ գործից ստացված մետատվյալները:

Ֆայլերը իրենց մետատվյալների հետ միասին պետք է ստանան ունիկալ հղումներ, որոնցով դրանք առցանց հասանելի կլինեն: Ֆայլերի մետա տվյալների հիման վրա պետք է ապահովել խելացի որոնման ֆունկցիոնալություն: Էլ. փաստաթղթերը ավտոմատ կերպով կկոնվերտացվեն ստանդարտ ֆորմատի և ձևաչափի (.pdf և/կամ այլ ֆորմատի) ֆայլերի: Այս ֆայլերում կպահվեն նաև գործի վերաբերյալ մետատվյալները: Փաստաթուղթը ավտոմատ կերպով կստանա ձևայնացված շապիկ (header, footer) և QR կոդ, որում կպարունակվի փաստաթղթի մետաինֆորմացիան և դեպի առցանց տարբերակ էլեկտրոնային հղումը:

Datalex-ի էլեկտրոնային գրասենյակի ենթամոդուլում այսօր առկա է փաստաթղթերի ֆայլերի վերբեռնման որոշակի գորառույթներ: Այս ծրագրի շրջանակում հարկավոր է զարգացնել ֆունկցիոնալությունը և յուրաքանչյուր էլեկտրոնային փաստաթղթի (դիմումների, բողոքների, ապացույցների, միջնորդությունների և այլն) համար նախատեսել համապատասխան դաշտեր առանձին վերբեռնման հնարավորությամբ, որոնք ամբողջությամբ կպահվեն առանձին էլ. ֆայլերի պահպանման մեծ տվյալների շտեմարաններում և կինտեգրվեն CAST և Datalex համակարգերի հետ: Էլ. փաստաթղթերից բացի պետք է ապահովել ցանկացած ֆորմատի մեդիա ֆայլերի (այդ թվում նաև աուդիո և տեսաձայնագրություններ) գործին կցման և էլ. ֆայլերի շտեմարանում պահպանման ֆունկցիոնալություն CAST և Datalex համակարգերում

CAST համակարգի էլեկտրոնային գրասենյակը պետք է բաղկացած լինի էլեկտրոնային եղանակով ստացված դիմումների, միջնորդությունների, բողոքների և այլն վերաբերյալ համապատասխան բաժիններով կարգավորված ամբողջական էլեկտրոնային շտեմարանից, ինչպես նաև այդ փաստաթղթերը հեշտությամբ անհրաժեշտ տվյալներով որոնելու, ուսումնասիրելու, պատասխան ուղարկելու հնարավորությունից: Անհրաժեշտ է ապահովել նաև CAST համակարգում մուտքային, ելքային, բողոքների և այլ մատյանների ինտեգրումը դատական գործերի էլեկտրոնային քարտերին, որպեսզի քաղաքացուն հասանելի լինեն Datalex.am ինտերնետային կայքի էլեկտրոնային գրասենյակ բաժնի միջոցով ստացվող